

ԱՄԵՐԻԿԱ

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

5507 ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 12

10 ՓԵՏՐՎԱՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մա'րդ» մը

Վէպերը գրականութեան մէջ

Գրալուծութիւն եւ Դաստիարակութիւն

Վայնականը

ԿՐՕՑԻՍ. ՅԷԼԷՑՑԱՐ

Բաթիլները. (Գերբուած)

Կրիգոր Խան Շաւառնեան

ՄԱՍԻՍԻ բաժանորդագրութեան նոր նուէրները

Մեր կեանքին

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՀՐԱՆՑ ՆԱԶԱՐԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱԿ

1907

ՏՊԱՐԱՆ ՓՈՐԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌ

Զ Զ Օ Ն Գ Ա Գ Ա Զ Ե Ա Ն

34, Կ. Պոլիս, Պապը Այի Ճասսէսի, 34

Պատիւ ունիմ ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ Տպարանս
և Փորագրատունս որ երկար ատեններէ ի վեր անդուլ գործունէութեամբ,
ուղղամտութեամբ և խղճմտութեամբ Պոլսոյ և գաւառներու յարգելի
յաճախորդներու ա մէջէն ճաշակատիրները անգամ գոհացուցած է, եւ-
րոպայէն բերել տրուած այցաքարդերու, հրաւիրագիրներու, անվճարե-
րու, նախկազլութներու ևն. ևն. ճոխ մթերքով և դիւրամատչելի գի-
ւերուն շնորհիւ պատրաստ է մրցելու բոլոր այս կարգի հաստատութեանց
հետ, պատրաստելով ամէն տեսակ և ամէն լեզուէ վաճառականական
պիտոյքներ, հրաւիրագիրներ, մահազդ. և ընտիր այցետոմսեր ևն. ևն.
խիստ ճաշակատիր և դիւրաբատչելի:

Ասոնց մէջ գատ փորագրատանս մէջ կը փորագրուին ամենանուրբ փո-
րագրութիւններ, բժիշկներու և փաստաբաններու թապէլաներ մետաղէ
և քառաչուէ, ամէն տեսակ կնիքներ և ասոնց վերաբերեալ զանազան
տեսակ մեքենաներու ճոխ մթերք մը միշտ պատրաստ կը գտնուի գոր-
ծատանս մէջ:


Գաւառներէ ըլլալիք յանձնարարութիւններ փութով և ուշադրու-
թեամբ կը կատարուին: Անկէ անգամ միայն տպարանս և փորագրա-
տունս այցելել կը բաւէ հաստատելու հա՛ար այն բոլոր առաւելութիւն-
ները զորս յաճախորդներու գիրութեան համար չեմ խնայեր միշտ:
ՄՐՃՈՒՄ, ՄԱՔՐՈՒԹԻՒՆ և ԴԻՒՄՈՒԹԻՒՆ: ԶԳՕՆ

Հայ Ս. Եկեղեցիի հաւատացեալ ժողովուրդին դիւրութեանը համար
մասնաւորապէս՝ Սահակ Ռ. Խանճեանի կողմէ պատրաստուած ամէնէն
ճոխ, ամէնէն գեղեցիկ, ամէնէն ընտիր Աղօթագիրքը, որ իր 700ի մօտ
էջերով կը բովանդակէ բոլոր եկեղեցական արարողութիւնները և աղօթք-
ները, կը ծախուի ամէն տեղի համար լաթակազմը 10, ոսկեզօծը 17,
փառակազմը 25 զրդ.ի: Դի եւ Զարդարեան գրատունները. Կ. Պոլիս
Զաքարիա Զեքեր, թիւ 24-26: Եւ Բերա Գուլէ-Գարու, թիւ 695:

ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐՈՒ ՎԿԱՅԱԿԱՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԻ ՀԱՆԴԵՍԸ .—

Շարաթ օր Մար Եկեղեցիի մէջ տեղի ունեցաւ մայրաքաղաքի վերջին ուսումնական տարիին շրջանաւարտներու վկայականներու բաշխումը : Ժառեր արտասանեցին Պ. Ներսէս Գոյումճեան, Օր. Հայկանոյ Յակոբեան, Պ. Հրանտ Աղամեան, Պ. Յարեթ Յովակիմեան : Ս. Պատրիարք Հայրը շրջանաւարտներու վկայականներ բաշխեց : Յետոյ Ն. Սրբազնութիւնը բաժնեց Էսայեան վարժարանի, լրացուցիչ դասընթացքէն ընթացաւարտ հետեւեալ օրիորդներուն վկայականները : Օրիորդք՝ Տիրուհի Աղարեան, Սաթենիկ Վարդանեան, Հայկունի Հոնէսեան, Էլիզ Մէհտէրեան, Հայկանոյ Յակոբեան, Նուարդ Գառնիկեան և Նուարդ Գառսիկեան :—Ռուսահայտակ Պրն. Անտրոնիկ Խանէսքու, քնիկ ուսման հայ, Քիչնեցի (Պետրապիտ), որ Բարիգի մէջ մեռաւ վերջերս, իրմանէն վեց ամիս առաջ, Քիչնեի Ռուս նոտարութեան ձեռքով, իր կտակագիրին մէկ պատճէնը հաղորդած էր Ս. Պատրիարք Հօր, որ կը հետամտի կտակին գործադրումին : Հանգուցեալը 138,000 Ֆրանք թողած է դրամատունի մը մէջ, ճարտերէն և հայերէն լեզուի վրայ իր ընդարձակ երկատիրութեան հրատարակութեան համար : Նաեւ, 120,000 ռուպլի անշնիք ունի զանազան պարտականներու վրայ՝ որոնք գրաւներ տուած են իրեն, և 50,000 ռուպլի արժէքով ալ արժեթուղթ ունի դրամատունի մը մէջ : Ահա այս վերջին երկու գումարները Պրն. Խանէսքու կտակած է Պատրիարքարանին, անտէրունչ և չքաւոր տղոց հովանաւոր Հաստատութեանց պէտքերուն համար :—Տիգրիսարանակ Պրն. Պաղտասար Արմուեան 30,000 ռուպլ. կտակած է Գէորգեան Ճեմարանին, պայմանով որ տոկոսը իր կիներ Նուրիա ատանայ մինչեւ մահը, անկէ ետքը տոկոսը միայն գործածուի Ճեմարանի սաներ Եւրոպա զրկելու՝ բարձրագոյն կրթութեան համար :—Լճոտոնարանակ վաճառական Գալուստ Էֆ. Կիւլպէնկեան 1000 Ֆր. զրկած է Ս. Պատրիարք Հօր՝ Պատրիարքարանի պարտքին համար :—Հայ Հոռմէական հասարակութենէն Մկրտիչ պէյ Ալլահովէրի իր ծննդավայրին՝ Կարինի Ս. Աստուածածին Եկեղեցիին 200 ոսկի նուիրած է :—Վենետիկի Միխիթարեան Միաբանութեան վանահայր Տ. Իգնատիոս Արքեպսկ. Կիրեղեան 1000 Ֆրանք նուիրած է Մուշի աղքատներուն բաշխուելու համար :—Պալքէսիւրի մէջ Մանկապարտէզի ծառահանդէս մը տեղի ունեցեր է : Մանկապարտիզատնուհի Օր. Սիրանոյ Ոսկանի առաջնորդութեամբ, հետաքրքրաշարժ արտասանութիւններ ու տրամախօսութիւններ կատարուեր են : Արմենակ Էֆ. Պաքճեան տղ ճառ մը կարդացեր է, ինչպէս Պատր. փոխանորդ Տ. Կարապետ Ծ. վրդ. Մազլըմեան :

—Տիրան պէյ Ալեքսանեանի՝ Հայ ծանօթ արուեստագէտին մէկ նոր յաջողութիւնը կ'արձագանգեն բարիգեան թերթեր : Հռչակաւոր թաւջութակահարը, վերջերս հրաւիրուեր է նուագել զրական և գեղարտական հաւաքովի մը մէջ : Լա Վի Էօռեօզ հանդէսին Մրշանակի Յանձնաժողովը գեղարուեստական հանդէսներ կը դառնէ տմէն ամիս :



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԲԴ ՏՄԻՒՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 12

10 ՓԵՏՐՎԱՐ 1907

“ՄԱՐԴ,” ՄԸ

Ողբը ընդհանուր է, սուգը համայնական, դուր ճշմարիտ, արցունքը ինքնարուխ, ցառակցութիւնը տնկեղծ, դադաղին առջեւ մարդու մը, որ մեղ մէ կը բաժնուի վաղաժամ, զգեստուած անտիկալ և անողոք հարուածէն Մահուան: Վշտակցութիւնը չղարձաներ անոր կորուստին ցառը, արցունքը չափօքեր, ողբը չսփոփեր: Ինքնարուխ, անկանխա-կալ, անհաշիւ փղծկումն են յազման այդ գայարումները, որոնք կը ժայթքեն հոգիներէ, ուղղուելու համար յիշատակին, անունին ու անձին Մարդու մը, որ կրցած է հոգիները իր կեանքով ցնցելու և անխտիր առնէն սիրուելու արժանիքը մարմն օգնել, սիրուելու հարուստէն՝ ինչպէս ազքառէն, երիտասարդէն՝ ինչպէս ծերէն, զարգացածէն՝ ինչ-պէս անգէտէն, ազնուականէն՝ ինչպէս ռաբիկէն, բարեկամէն, ծանոթէն, ազգականէն՝ ինչպէս անծանօթէն, հեռուորէն, օտարէն: Ինչո՞ւ պաշտատունքի, սէրի, փառաւորութիւն, վշտահարութեան, միահատու-սգակցութեան այս ցոլցները՝ որոնք տնրիժ անկեղծութեամբ կը բարձրա-նան դադաղին շուրջը պաշտելութեան առարկայ թերափին: — Որովհետեւ այդ մեռելը, Գրիգոր Խոն Շաբոսեան, եղած է Հոգի մը, կեանք մը, Անձ մը, Դէմք մը, որ արեւցնել զիտցած է Մարդ տիպո-սին կոչումը: Իր կեանքը գիտցաւ ան չղարձնել տարիներու անգէտ և ունայն չրջան մը: Ան իմաստ մը դրաւ կեանքին մէջ, ու իր անձը օրինակ հանդիսացուց բնուն ու արդիւնաւոր կեանքի մը, որ չողբա-

ցներ տարիներու անցքը։ Մէկ անձի մէջ, երեք հսկայ արժանիքներ մշակեց ան, Մարդը ամբողջացնող երեք հազուագիւտ ձիրքեր, երեքն ալ պատկառազգու կատարելութեան մը լարձրացած, — վաճառական մարդը, բարեգործ մարդը, մտաւորական մարդը։ Իր մարդկային ընկերութեան անդամ, կեանքի պայքարին մէջ յաջողութեան իր իտէալը ուղղեց վաճառականութեան, ըլլալով առեւտուրի մարդ, որ վաճառականութիւնը դիտութիւն մը բրաւ, անոր սկզբունքներովը շարժեցաւ, յաջողեցաւ, ու նշանաւոր Դէմք մը հանդիսացուց ինքզինքը առեւտրական ասպարէզին մէջ։ Դրամ, չափ, կեանքի վայելքներ, պերճանք, չարդիւնեցին զինքը որ այդ հնարաւորութիւններէն իսկ բղիտը միտքի ու հոգիի վայելքներուն անհաղորդ մնայ և չարինայ անոնց ճանաչողութեան հաճոյքէն։ Ու լիարաց, առատարաշխ Զեռք մը եղաւ ան՝ համեմատ մարդկային ամէն տղնիւ կարօտութիւններու, սրտաբուխ ու դժու անձնուիրութիւնով մը՝ որ խնայել չգիտեր, որ խտրութիւն չճանչնար, որ չհոտներ, որ չվարանիր։ Ու տուաւ աղքատին, տուաւ կարօտին, անկեալ տունի հօր՝ ինչպէս ուսանողին, չքաւոր այրիին՝ ինչպէս անկարող ծերունիին, առանց հարցնելու, առանց իր բարեգործութիւնը հռչակելու, տարփողելու, լռելիայն, ձեռքի տակէ, ուրիշ հաճոյք չփնտռելով իր ողորմատութեան մէջ, բայց եթէ հոգեկան ինքնասովոր դունաւորութիւնը թէ՛ պէտքի մը, կարօտութեան մը կը հասնէր, ինկած մը կը վերցնէր գետնէն, կորուստի անդունդին եզերքը դեպքերով մը կը փրկէր՝ զօրեղ բազուկով մը անոր թեւէն բռնած ասեղին առնելով։ Ու տուաւ առանց խնայելու, առանց մէկը-երկուքը հաշուելու, առանց փառք փնտռելու, կը բաւէր որ կարօտ մը գիմէր իրեն։ Լկսօր իր մահը միայն կը յայտնէ թէ՛ քանի՛ քանի ուսանողներ, քանի՛ քանի գաղտնիքնին պարզելու անհամարձակ չքաւորներ լռելիայն իր պաշտպանութիւնը կը վայելէին, և մա՛րդ տեղեկութիւն չունէր այդ բանէն, ո՛չ իսկ իր ընտանիքը։ Տենդու, բազմազբազ, մտատանջ, սրարչաւ ու հեւի հեւ մտանոգութիւններով ծանրաբեռնուած իր կեանքը չկասեցուց զինքը ըլլալու՝ որչափ դործի ու հոգիի՝ նոյնչափ միտքի մարդ, որ ժամանակ կրցաւ գտնել մտաւորական աշխարհի լայն ու անծայր ոլորտներուն մէջ շրջելու, տիրանալով համայնագիտական ընդարձակ հմտութեան մը։ Ու եղաւ մեր մէջ ամէնէն լայնասմուտ գլուխներէն մէկը, որ գաղափար ունի հին ու նոր մտաւորական աշխարհի դրեթէ բոլոր դիմայեղումներուն, անցքերուն ու վիճակներուն վրայ, անոնց կենդանի պատկերը պարզած աչքին առջիւ Մատենադարանով, — թերեւս ամէնէն ճոխերէն մէկը մայրաքաղաքիս անհատական մատենադարաններուն։ Դրամին ու Շահին հեշտաւէտ հաճոյքները ճանչցած մարդուն՝ գաղափարական ու մտաւորական վայելքներով ալ նուիրումի այս անսովոր օրինակէն պսելի ի՛նչ մեծ դաս, քիչ մը սթափեցնելու

համար լոկ Քուսի պաշտամունքին նուիրուած մեր կարգ մը ոսկիի կուռքերը, և ճշմարիտ Մարդուն մէջ բնակող այդ անդուգական ու հսկայ երրեակ առաքինութիւններէն ի՞նչ տեսլի խոշոր պատճառ՝ ճանշնալու և դաւանելու համար զինքը անուին ու կոչումին արժանի ճշմարիտ Մա՛րդ մը, որուն կեանքը իմաստ մը ու իմաստասիրութիւն մը կրցա՛ծ է ունենալ, կեանքին մէջ:

Մահէ ետքը երախտագիտութեան ու վշտակցութեան ցոյցեր՝ կը մասնանշեն Մարդուն Արժանիքը և Գործը: Որչա՛փ մեծ է ուրեմն յարգը այդ Արժանիքին ու Գործին, երբ մարդկային զգացումներու այդ ցոյցերը անեղր բարձունքներու կը հասնին:

Այսօր երբ ան կը բռնուի մեզմէ ու կ'երթայ յանձնուիլ հողին, իր դագաղին ետեւէն կ'ողբան ի՛ր ու օտա՛ր ալ համայնքէ անհամար թիւով հողիներ, և անկեղծ կսկիծի, ճշմարիտ ցաւի, սրտարուխ ողբի արցունքը կուլան: Զուակերպական ու առեւտու լացի, կոկորդիլոսի չոր արցունքներ չե՛ն թափուած արցունքներ: Անո՞նք, զգացուած անխտրարար անսահման ընդհանրութեան մը կողմէ, անկեղծ վկաներն են այն հոգեկան անդուսդ ու վրդովիչ վիշտին՝ զոր Մա՛րդը կրնայ արթնցնել հողիներու մէջ, իր դագաղին ետեւէն, գերեզմանէ՛ն ալ անդին:

Մեռե՛լ մը կը տանին թաղել, որուն ետեւէն կը փղձկին աչքերը ա՛նէնէ՛ն անշահախնդիրներուն, և այդ աչքերը չե՛ն չորնար սրտազին զգացուած լացէ մը, և անոր թողած սուգը, ցաւը կը բաժնեն ամէ՛ն սիրտեր:

Ահաւասիկ Մա՛րդ մը:

Կը թաղուի՛ ան, բայց չմեռնիր:

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՎԷՊԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—•••••

Հռչակաւոր ի հաստատէր Մաքս Նորտաու իր Paradoxes Psychologiques գործին մէջ սքանչելի կերպով կը բացատրէ թէ՛ ինչպէս մասնաւորաբար կրնոր՝ վէպերու ընթերցումներու հետեւանքով՝ ձեւով մը կը կորսնցնեն իրենց բնազդային և ճշմարիտ զգայութիւնը կեանքին, և անմիջա՛յան ազդեցութեանը տակ կը մոռնան իրենց կարգացած հերոսութիւններուն, որուն հետեւանքը կ'ըլլայ անտարակոյս զանոնք կապիւնու, անոնց ազդելու եղանակին ընտանեանալու, անոնց զգացումները իւրացնելու ձգտումը: Եթէ նկատի առնենք որ ընդհանրապէս չատ կարգացուած վէպերը գրական ամէն յատկութիւններէ զուրկ, հետաքրքրութիւնը չարժեքելու համար անբնական և այլանդակ արարքներով խճողուած և բռնազբոսիկ ու կեղծ զգացումներով տուգոր-

ուած վէպեր են, կը տեսնենք թէ անոնց ազդեցութիւնը որքան մեծ այնքան ապականիչ է ընկերութեան համար:

Սակայն, ամէն գէշ բնազդներու պէս, կնոջ այս վիպաժողութիւնը չափազանց չահագործուած է. ամէնէն քաղաքակիրթ երկիրներու մէջ գլխաւոր գլուխ-գործոցներու քով հաւասար կամ զերազանց արտադրութիւն մը կ'ըլլայ այս կարգի վէպերու. անոնք հրապարակը կ'ողողեն ըլլայ թերթօններու ձեւի տակ, ըլլայ առանձին հատորներով, պարբերական հրատարակութիւններով, թերթի առ թերթ հրատարակուելով: Բարկի մէջ հանդէսներ կան որոնք 15 օրը կամ չարաթը անգամ մը կը հրատարակեն այս կարգի վէպերէն 5—6 հատ միասնադամայն շարունակելի: Ժողովրդական թերթերու յաւելուածական թիւերը ուրիշ բան չեն, բայց եթէ այլանպակ նորավէպերու հաւաքածոներ, կոմսուհիներու, դքսուհիներու առեւտրածային տրկածներ, իրականութենէ զուրկ և հետեւաբար անբնական զգացումներու զերադրութիւններ, որոնք կոչուած են հանգարտիկ և համաս գործաւորուհիին երեւակայութիւնը խռովելու և անոր սիրտին մէջ արթնցնելու ապօրինի տեսչանքներու ծորաւը:

Նաեւ ոճիրներու, առեւանգումներու մանրաբան պատմութիւնները, յայտնի է որ միշտ գրգռելու հանգամանքը ունին մարդու անբնական բնազդները: Դիտուած է որ ամէնէն մեծ շարագործները ամէնէն շատ ընթերցողները եղած են թոյն-զաշտնական վէպերու: Միւս կողմէ չէ կարելի ուրանալ թէ անոնք շարունակական ազդեցութեանը ներքեւ եղած են ոճիրներու պատմութեան և իրենք իսկ երբեմն անգիտակից վիճակի մը մէջ կատարած են իրենց մտադրած շարագործութիւնը:

Ասոր ապացոյց կուտան ընկերաբանները և մասնաւորապէս ոճրաբանութեամբ զբաղող գիտունները՝ այն պարագան թէ յոճախ ոճրագործ մը կ'ընդօրինակէ գրեթէ իր բոլոր մանրամասնութիւններուն մէջ արդէն գործուած ոճիր մը կամ վէպի մը մէջ նկարագրած մարդասպանութիւն մը: Հետեւաբար որոշ կերպով կը տեսնուի թէ գէշ ճաշակով պատրաստուած ստորին վէպերը, թերթօնի և ուրիշ ձեւերու տակ, ընկերական մեծ պատուհան մը կրնան դառնալ իրենց ապականաբար և խոտորիչ հանգամանքովը ազդելով զիւրարեկ հոգիներու վրայ:

Միւս կողմէ գիտենք, և ասիկա հաստատուած ճշմարտութիւն մըն է որ, կրնան շատ աւելի վիպամոլ են ասիկա անտարակոյտ արդիւնքն է իրենց աւելի ջգային խառնուածքին որով միշտ ծարառ են յուզմունքներու, ուժգին տպաւորութիւններու և զիրենք զգրող զգայութիւններու: Իրենց կրաւորական հանգամանքը ընկերութեան մէջ՝ իրաւ է թէ թոյլ չկատար իրենց գործօն ձեւով մը յայտնելու իրենց կրած գէշ ազդեցութիւնը, և ասոր համար է որ վէպերու ընթերցումը կնոջ մէջ նոյն երեւոյթը առաջ չի բերեր ինչ որ պիտի ընէր այդ ընթերցողին:

Այսինքն հաղու ազիտ է որ կին մը ոճրագործ ըլլայ, ընթերցումներու թերազրութեամբ, առիկս իր խառնածքին հակառակ է արդէն. բայց վէպերով անո՞՞ծ կանոցի երևալայութիւն մը առէնէն աւելի ընդունակ է ոճիր մը գրգռող պարագաներ մէջտեղ հանելու: Զեւով մը կինը այդ պարագային իր կարդացած վէպերու հերոսահիներուն դերը կը կատարէ կեանքին մէջ, էրիկ մարդուն նախանձը գրգռող քնազղներու ընթացքով մը:

Եւ վերջապէս, եթէ կինը իր կրօնական դիրքին պատճառաւ անմիջական վտանգ մը չէ ընկերութեան, միտ կողմէ պէտք չէ մոռնալ թէ ինքն է որ կուտայ վաղուան մարդերը. իր մայրութեան պատրաստուելու ժամանակին մէջ գիտենք թէ ինչ չափով կրնայ ազդել դեռ սաղմնային վիճակի մէջ գտնուող զաւկին հոգեկան տրամադրութիւններուն վրայ: Յդի վիճակի մէջ արկածներու հանդիպող կիները ընդհանրապէս ջղոտ տղաքներ կ'ունենան. եթէ վայրկեանի մը կամ ժամուան մը սարսուփը կարող է այդքան հիմնովին փոփոխութիւն մը յառաջ բերել կազմուելու վիճակի մէջ եղող տղուն վրայ, ինչպէս տարակուսիլ թէ աւօրեայ վնասներ ազդեցութիւն մը յամբարար բայց ապահով կերպով նոյնքան ազդեցութիւն պիտի չունենայ դեռ չծնող տղեկին վրայ: Թերթծն-վէպերու այս ապականաբար ազդեցութիւնը գրեթէ բացառութիւն չունի. աշխարհիս ամենէն քաղաքակրթեալ կեդրոններէն ամենէն յետին գաւառները նոյն երեւոյթը մէջտեղ կուգայ. հետեւաբար ամէն համեմատութիւն պահելով, պէտք է խոստովանինք որ վերոյշեալ վտանգները նոյնը կը մնան մեր կիներուն համար ալ, քանի որ գիտենք թէ անոնք կարգաւ սորվելու վայրկեանէն խելայեղ ընթերցողներ եղած են վէպերու: Զարմանալի է որ միւս կողմէ բուն իսկ դրական արժէքով գիրքեր կամ իմաստասիրական գործեր չափազանց քչ ընթերցողներ կ'ունենան կիներս մէջ: Առիկա արդէն սպացոյց մըն է թէ ժողովուրդի մը մէջ ընթերցասիրութիւնը գրգռելու նպատակաւ ժողովուրդին մատչելի և անոնց գէշ ընազդները չոյող հրատարակութիւնները իրենց նպատակին չեն հասնիր. ընդհակառակը բոլորովին տարբեր արդիւնք կ'ունենան: Այլ ընդունուած ճամբատութիւն մըն է որ ալքոլի, նիքթիմի և ուրիշ այս կարգի նիւթերով թունաւորման ունակութեան պէս մոլութիւն մըն է նաեւ թերթծն-վէպերու ընթերցամոլութիւնը. մանաւանդ որ այս վերջին ունակութիւնը իր արդիւնքներուն մէջ տեղի չիտար առաջիններուն թէ իրրեւ ընկերական վտանգ մը և թէ ապասերող միջոց մը ժառանգականութեան միջոցաւ:

ԶԱՊԵԼ ՆԱՍԵՆ

ԲԱԹԻԼՆԵՐԸ

Պատահանես կը դիտես
 Զիւնի անվերջ հասերուն
 Նազանֆոս կը՛ն օղանես
 Որով միևիւ շա՛ս հեռուն
 Կը տարածեն ըսպիտակ
 Եւ շանկերու անսահման
 Դաշտի մը հմայքն ու պատանփ:
 Թիթեռներու հոյի նման
 Հալածական՝ շուկէն սառ
 Զըմբան կըծու, անդոփ,
 Օ՛, տեղագիւն յորձանփարն
 Բարիչներուն մըսահոգ . . . :

Երկնի անո՛յշ կապոյտէն
 Անդաճօրէն բաժնուած,
 — Երբ անուրջներ կը դիտեն
 Իրենց հոգիւն տրտմայած —
 Ասանդական, քափառուն
 Շրջնոյիկներ՝ կուզան ման,
 Իրենց ցընդուն իղձերուն
 Ոյտսիւն մէջ անսահման
 Միևիւ անվերջ վազներու
 Խօյ շրջանէն՝ խոնջ, տընջ,
 Իշան անոնփ, քօշնիւ
 Զըմբան ծաղկի մը հանգոյն:

Անուրջներն եփ արդեօք դոփ
 Մարդուն տեղոս, ցանկափառ,
 Կամ քե հոգոյն արտասո՛ւփ
 Տենչերն եփ քիւր, անհամար՝
 Անյազ սրտիւն անայի,
 Որ իր խորշէն՝ իսեալ
 Բարձունքներուն կը մայի
 Կամ յոյսերու տխրահալ՝
 Թեւաբախո՞ւմն ըսպիտակ,
 Եւ կամ ցրնդո՞ւմն իսկ հըպանց
 Ըզգայութեանց անապակ,
 Ո՛րով չունիւ վերադարձ:

. . . Բայց քիթներն այդ անքիւ
 Իբրեւ ամբողջ պատասխան՝
 Պարով մ'անվերջ, մըստե՛ւ
 Կը պըտտօսին խօշական:

ՄԻԼՈՒՆ ՌԻՂՈՒՐԼԵԱՆ

ԳՐԱԼՈՒԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Միշտ կ'ենթադրեմ որ հայ ընթերցող դասակարգին հետաքրքիր ու բանխմաց մասը՝ գրալուծութեան^[1] ընծայեց այն կարեւորութիւնը որուն արժանի է ան։ Այդ լաւատես ենթադրութիւնն է որ կարծել կուտայ ինծի թէ՛ առանց անպատեհութեան կրնամ մերթ հրապարակով մօտենալ այս հարցին։ Չեմ բեր թէ գրալուծութիւնը ռամկանալի գիտութիւն մըն է։ Մտաւորական աշխուսպետութեան դրոշմ մը ունի ան, իմացական վարժերու բարձրագոյն սահմաններուն պատկանող ուրիշ ուսումներու նման։ Եւ յետոյ, գրալուծութիւնը մաթեմատիքական գիտութեանց ճշգրիտ բացարձակութիւնը չի կրնար ունենալ իր ընտելեամբն իսկ։ Անիկա գիրը չի լուծեր գրահաշուական տարազի մը համեմատ։ Որովհետեւ, անիկա միջոց մը ըլլալով մարդկային հոգիին երեւոյթներուն ուսումնասիրութեան, նոյնքան գիտութեան՝ որքան տաղանդի գործ է։ Գրալուծութիւնը անվիճելի կերպով կայ։ Մենք զայն կ'արժեցնենք՝ մեր սեփական տաղանդին համեմատ։ Այսուհանդերձ, կը սիրեմ յուսալ թէ, այն հանգամանքով որ գրալուծութիւնը դիմագիտութեան, գանկագիտութեան ու նմանօրինակ զննական գիտութիւններու պէս, քանի որ աւելի կամ նուազ իսկատիպ ու անանկալ ձեւի մը ներքեւ, կը զբաղի մարդկային նկարագրին ուսումնասիրութեամբ, պիտի հետաքրքրէ ընդհանրապէս ընթերցող հասարակութիւնը, և եթէ իր զբօսուցիչ ընդհանրացումը պատճառ պիտի ըլլայ թերեւս իր անիրաւ վարկաբեկութեան՝ սալօնի գրալոյծներու ձեռքին տակ, այլ սակայն ապահովապէս ուշադրութիւնը պիտի գրաւէ նաեւ այս կարգի ուսումներու մասին ճաշակ և ընդունակութիւն ունեցող լուրջ միտքերու։

Ուրիշ առթիւ գրած եմ թէ Եւրոպայի գիտական աշխարհը ի՞նչ ձեւերու ներքեւ ու ի՞նչ աստիճանով կարեւորութիւն կ'ընծայէ գրալուծութեան։

Այս անգամ, Պ. Բէլլա, անգամ Գրալուծական Ընկերութեան Խորհուրդին, գրազնիւ^[2] Սէնի դատարանին մօտ, հրատարակած է գիրք

[1] Նախապէս գործածուած գրալուծութիւն բառը՝ կը շփոթուէր մասեմալուսու. րիւն բառին հետ։ Այս անտեղումները դարձանելու համար, կ'առաջարկեմ գրալուծութիւն բառը, որ եթէ graphologie-ին ստուգաբանական հայացումը չէ, — քան մը որուն ստիպողականութեան ներքեւ չենք գտնու. — այլ սակայն կը բացատրէ, թէ՛ իր կազմութեամբ և թէ՛ իր նորակերտ բառ, graphologie-ին նշանակումները։ (Գաղտնի չէ՞ առջիկ պատշաճապէս գործածել գրահաշուութիւն բառը. — Խմբ. Դիս.)

[2] Գրագնութիւնը, (expertise en ecriture) կը տարբերի գրալուծութենէն անով որ՝ բոլորովին մէկ կողմ թողով գիրին հոգեբանական յայտնութիւններուն տեսակէտը, կը զբաղի ուսումնասիրելու գիրին նոյնութեան պարագան ջանագան ձեռագիրներու՝ միեւնոյն ձեռքէն բղխած ըլլալու խնդիրն է իր աշխատութեան նիւթը. Այս կէտը յաճախ պէտք կ'ըլլայ լուսաբանել դատական հարցերու մէջ։

մը, Գրալուծութիւնը ի սպաս Գասիարակութեան, (L'Education aidée par la Graphologie) այլապէս չաճեկան, դաստիարակութեան ու նկարագրախօսութեան կրկին տեսակէ տներէն:

Գրալուծութիւնը չաճաւորել ի նպատակ դաստիարակութեան, նոր գաղափար մը չէր, ինչ չէս կ'ըսէ Պ. Բէլլա: Միշտ, գրալուծութեան հիմնադիրը, 878-ին հրատարակուած տետրակի մը մէջ, արդէն իսկ մասնաձեռն կ'ընէր գրալուծութեան ապագայ շերտ՝ դաստիարակութեան կալուածին մէջ: Անկէ ի վեր գաղափարը բեզմնաւորուած է, և 19-րդ դարի առաջին կեսին պայտօն մէջ ի նիւս դաւարած՝ Գիրի Գիտութեանց Միջազգային առաջին համաժողովը նկատի առաւ զայն, որոշ ձեռք մը ներքեւ: Երեք գրալուծներ, Տիւրքիոյ մը Սալպէսկ, որ աճէ տարի Հաշէթի Օրացոյցին գրալուծական նուէրներուն ուսումնասիրութիւնը կ'ընէ, Պ. Շօքրնէ, Շօնիի բարձրագոյն նախակրթարանին տնօրէնը և Պ. Բայո, որ 1896-ին, Պ. Քօնրէլիի հովանաւորութեան ներքեւ առաջին փորձ մը հրատարակած է այս խնդրին վրայ, երեք communication ներկայցին, յաջորդաբար: Համաժողովին բաղձանքին համեմատ, Գրալուծական Ընկերութիւնը մասնախումբ մը կազմեց, պաշտօն յանձնելով անոր խնդիրը ուսումնասիրել: Մասնախումբին անդամ էին Տիկին տը Սալպէսկ, Պ. Պ. Բայո և Շօքրնէ, Վառնաա և Վիլէ, նախագահ ու ղեկավարագահ Գրալուծական Ընկերութեան, Բօլ Լօռ, պատուակալ ուսուցիչ վաճառականական հաւաքարանի, Պ. Բէլլա, ճեղքնակ խնդրի առարկայ երկասիրութեան: Հարկ եղած վաւերանիւթերը ժողովելէ եւ երկը ծրագրելէ յետոյ, խմբագրութիւնը յանձնուեցաւ Պ. Բէլլայի: Իրենց անուղղակի աշխատակցութիւնը բերած են նաեւ՝ բազմաթիւ ուսուցիչներ և ուսուցչուհիներ, հմուտ բռնօճէտներ և հանրածանօթ գրալուծներ:

Բոլոր այս ծանօթութիւնները անպէտ չեն, Գրալուծութեան դաստիարակութեան կալուածին մէջ ձեռք բերած ու հաւաքաբար ընունուած կարեւորութիւնը ըմբռնելու համար:

Յիրաւի, ընդհանուր դաստիարակութեան տեսակէտէն, որքա՞ն չաճեկան ու անհրաժեշտ է մանչեակ մանուկը, իր իմացական կանխատրամադրութիւններուն ու բարոյական ընդոծին հակումներուն համեմատ, ըստ այնմ կարենալ ձեւաւորելու համար զինքը: Բայց մանկական գրալուծութիւն մը՝ կրնայ քիչ մը աւելի մասնակի ու առանձնակի ձեւի մը ներքեւ միայն գոյութիւն ունենալ: Գրալուծութիւնը ուսումնասիրութիւնն է անշուշտ գիրին՝ իբր նիւթացած՝ սղկալ շարժում, եւ շարժումը ոչ այլ ինչ է բայց եթէ բնախօսօրէն արտաքնութիւնը հոգեկան հացութիւններուն: Եւ եթէ հոգեկան կացութիւններու խումբ մը տրուած անհատականութեան մը մէջ, նկարագիր մը կը ձեւացնէ, ապա ուրեմն գրալուծութիւնը նկարագրի ուսումնասիրութիւնն է: Բայց մանուկը

վերջնական կամ որոշ նկարագիր մը չէ դեռ։ Հազիւ թէ ապագայ նկարագիրը իր քանի մը լայն գիծերուն մէջ զգացնող նախադրակ մըն է ան։ Եւ յետոյ, գրաւոր շարժումը մանուկին մօտ չէ ստացած դեռ հարկ եղած դիւրութիւնն ու բնակութիւնը, որպէսզի կարելի ըլլար վստահիլ անոր յայտնութիւններուն հարադատութեան։ Բայց խնորը կակուղ է ու հեշտիւ գործածելի։ Որոշ մէթօտի մը և հնարքներու համաձայն, ըստ Պ. Բէլլայի, կարելի է հիմնել մանկական դպրոցական գրալուծութիւն մը, նպատակ ունենալով ուսումնասիրել մանուկը իր բացական, բարոյական ու ֆիզիքական բնդունակութիւններուն եւ հակումներուն մէջ, ու վարել այդ ձգտումները, դաստիարակութեան պահանջներուն համեմատ։

Ահաւասիկ մանուկը. պէտք է ճանչնալ զինքը. ի՞նչ կ'որժէ ան, իր ինքնակենտրոնութիւնը։ Ի՞նչ են ձեռն ու աստիճանը՝ իր զգայնութեան։ Բարոյական հակումները ի՞նչ նկարագիր ունին իր մէջ, իրը հասարակութիւն կա՞մ աշխարհութիւն. անշահախնդիր կամ կեղծ նկարագիր, իրեւ չարութիւն, հպարտութիւն, փառասիրութիւն կամ ունայնամտութիւն։ Յետոյ, հանգամանքները զգայարանական բնազդներուն, ախառոր տրամադրութիւնները, արհեստներու կա՞մ ասպարէզներու ընդունակութիւնները են։ Բոլոր այս կէտերը, իրենց զանազան ու շահեկան երանդներով, ուսումնասիրուած են Պ. Բէլլայի գիրքին մէջ։

Պ. Բէլլա, նկատողութեան կ'առնէ նաեւ գիրի դասը, զոր վարելու հոգի՝ գեղագրութեան տղէտ ու անմշակ ուսուցիչներու իրաւասութիւնէն պէտք է ձերբազատել։ Պ. Բէլլա՝ բանաւոր, *rationnel* գրավարժութեան մը ուսուցման կարելիութիւնը կը բացատրէ, հիմնուած գրալուծաճողեանական տղիքներու վրայ։ Այս ուսուցման գլխաւոր նկարագիրն է՝ խուսափում անկենդան գեղագրութեան ձոյ միօրինակութենէն, մասնաւոր պարագաներու ու չափի նկատառութեանը։ Իրեւ բնականութիւնը կանոն, ուրիշներու մէջ, կ'աւանդուի պարզութեան, ճաշակի, աշխարհութեան նկարագիրները խառնող գրավարժական տարազ մը, խոստովելով արուեստակիտ գիրէն, չափազանցուած մեծութեան ի պերեւելիկայ գլխադիրներէն, են։ Եւ ի՞նչ չարժու՞մը՝ հոգեկան իրական պարտադարձ մը արտայայտութիւն է, այդ չարժու՞մը, հակադարձօրէն, ընդունակ է հոգեկան համապատասխան պարագայի մը ծնունդ տալու։ Եւ ի՞նչ, օրինակի համար, լացը որոշ ձեւ մը կուտայ դէմքի մկաններուն ձգտման, այդ ձեւին գիտակից կերպաւորումը՝ լալու փափագ մը կարող է առաջ բերել։ Ահա թէ ի՞նչ տեսակ սկզբունքի մը համեմատ կարելի է բանաւոր գրավարժութեան մը հաւանականութիւնը։

Լրագրական յօդուածով մը միայն խոսելու ստիպուած ըլլալով Պ. Բէլլայի գործին վրայ, բնական է գոհացուցիչ ծանօթութիւն մը տուած չեմ ըլլար գրալուծութեան կողմէն մասին, ի սպաս դաստիարակու-

թեկան: Իմ նպատակն է խնդիրը մատնանել, հրախրելով մասնաւոր
ճաշակ և քնդաւնախելիքն ունեցող միտքերը՝ հետաքրքրել այս հար-
ցերով: Փրալուծութեան սկզբունքներուն պատշաճեցումը՝ հայ ձեռա-
գիրին, բաւական նոր ու կրճատ ուղխատութիւն կ'ընէ և Լաւ է որ,
գննատէր միտքեր քերեն իրենց գիտողութեան լուսման, որով գոցէ որ մը
հնարաւոր ըլլայ նաև հայրական գրալուծութիւն մը, նոյնքան մանրա-
մասն ու մանրակրկիտ, որքան են եւրոպականները:

ԱՐՏԱՆՇԷՍ ԵՍԻՐՈՒԹԻՆԵԱՆ

ՎԱՆԱԿԱՆԸ

Ի՛նքն ԿՐԹԱՅԻԱ ՏԷԼԷՏՏԱ Վ

Քանի մը տարի կ'այ որ՝ Սորոննոյ մէջ լեքան մը կ'ստար կառու գ-
ում Կանքի մը մէջ կը լնալին քանի մը Փրաւնչիսիւն կրօնաւորներ:
որոնք նպատաւ մտկելով կ'ազդէին: Անքն երեք կամ չորս ամիսը
անգամ մը՝ անոնցէ մէկը լնանէն կ'իջնէր, պզտիկ ձե մը կը նստէր
— քնդանրօպէս ազգ կ'ընդունին իրեն առանց որ և է փոխարինութեան
փոխ կը սրտէր անգլիոն հարստա զեղաղիններուն մէկէն ու այսպէս
կը կտրէր կ'անցնէր վեց եօթը գեղ, նպատաւ ուղեկու հաւար:

Վանականներուն է՛ն գեաւորն՝ Հայր Թօփէան էր, «Թօփէա» կ'ան-
ուանէին զինքը, որովհետեւ մտկի պզտիկ երկչոտ զլուխ մը տնէր,
երկար ամպոյն գտնելով ու պզտիկ վառվառն աչքերով: Քառներեքէն
քսանըչորս տարեկան կար, հակառակ աւելի տարիքոտ երեւոյնս:
Լուրի կ'ազդէր և սրբութիւն կը բուրէր. զրեթէ կոյժի կը նստնէր:
Նշած էր զաւակ ու ազակի մը, որ երկար ատենէ ի վեր մեռած էր:
ազալութեանը խաշնարած եղած էր և իր մայրը՝ հպարտ ու թշուառ
այրի՝ աւելի պիտի նստնէր որ իր զաւակը իր հօրը ճամբուն
հետեւէր քան զան կրօնաւոր տեսնէր:

Հայր Թօփէա ուրեմն իր բուն անունը հայր Զուան էր — ուղիմը
կ'ընէր, կ'աշխատէր և լուս ու մաշկ կեանք մը կ'անցընէր. իր մաւառ
նակը կը վատնէր վատաններուն ունեցած քանի մը այծերը կ'իջնէր:

[1] Կրացիա ՏԷԼԷՏԱ՝ Սարսիմիայի կին գրող մը եւ ուժեղ միտք մըն է, որ իր
համբարը շինած է Սարսիմիան ու Սարսիմիացի (կիւսաւրեյո), իսկապէս քնակ սնու-
րեամբ մը: Իր նմաստիւրած իմաստներն են Սարսիմիայ գեղը ու կնեւ-
կանը, որոնց փիլիսոփայութիւնը կը նեղ պայմէ կուստեպ հարգաւոր բնութիւնը: Իր ոնք
քանատեղծական փոխութիւն մը եւ ազնական կրօն մը ունի: «Վանական» անունն
փայլուն էջերէն մէկն է իր վերջին գործին, որ ճեմատեղէնի քարգնանկով՝ արժան պայծ
է փայլուն զննաւոր քննենալ:

Ետոյ ստիպելը կը հեկկէր խոհարարութիւն կ'ընէր, ամաններ կը լուար, և՛ հորերէն կ'աժ աղօխքներէն ջուր ընկելու կ'երթար: Յորեկէն ետքը, երկար ժամեր կ'անցընէր պատուհանին առաջըր ու հոցի փշրանքներ կը նետէր այն թռչուններուն, որոնք կը թռչնէին ժամանակէն մաշած քարաշէն պատշգամբին չորջր:

Անհուն միայնութիւն մը կը պատէր գորշ փոքրիկ փոփկուն փանքը: Բազմադարեան կազմներու անտառներ, տարօրինակ ուրուագիծերով ժայռեր՝ որոնք իրիկուան խաժագոյն վերջալոյսին հակա գլուխներով սփխքներու կը նմանէին, ժանոսախոչերու մացառներ, գեղին-կանանչ պտերներու զաշտեր՝ փանքին չորս կողմը կը տարածուէին լիքան կողերու վրայ: Հայր Թօփէսի պզտիկ պատահանէն անծարած իր հորիզոնը կ'երեւար, մանկչակապոյն լեռներ բարձրացած էին գէպի երկինք, որ առէն վայրկեան գոյն կը փոխէր, արշալոյսին կաթնային կապտուն՝ մինչեւ վերջալոյսին բոց սփռաւ կարմիր սոսիկներ: Հայր Թօփէս կը զգար առաջին գետնի գեղեցկութիւնը, տեղին երկնային մեծութիւնը: Կը վայելէր ժամուռներուն և խնդանոտ խոտերուն սուր բոցերը՝ որոնք առէն իրիկուն մընեկուն՝ տակաւ անտառներէն կը բարձրանային, երբ նոր լուսինը մանկչակապոյն, վարդապոյն լիլաի կ'աժ խաժակն երկինքին վրայ արիւնոզ վերքի մը պէս կը հակէր կապոյտ լեռներուն վրայ: Ժայռերը կը վառէին վերջալոյսին շողերուն տակ, իւր թէ իրենք ըլլային լոյս տուողները, և բոլոր անտառը սարսուռներ ունէր, չողեր, միօթիք մընեկներ և ամբողջ լեռը սիրոյ երազի մը մէջ բնիկ և՛ կը թուէր: Ո՞վ գիտէ ան ժամերով պատուհանին առջեւ կը կենար, նոյնիսկ երբ ալ թռչուններ անտառներուն մէջ ու ժայռերուն վրայ իրենց բոցները քաշուած ըլլային, մինչ ինք յափշտակութեամբ հրաշալի հորիզոնին գետնուած կը մնար: Ձմեռն ալ, երբ անգիրն ու մշուշը կը պատեն լեռները, վառականը պատուհանին մօտ կ'երթար ու անոր կը գնէր իր տեղին ու ցորակն ճեղքատու գունդը, և հեռուն կը գիտէր, փշրանքներ նետելով ագտանքներուն՝ որոնք առկերէն կուգային ու նորէն անգիրուն կը վերադառնային, իրենց խաւատ ձայներով շնորհակալ ըլլալով իրենց տարօրինակ բարեկամին:

— Աս աղանձ՝ Սուրբ Ֆրանսուայի պէս սուրբ մը պիտի ըլլայ, կ'ըսէր Հայր Շիրչիւ, դանապանը, որ առէն գիշեր կուլար և ինքզինքը կը ծեծէր, որովհետեւ ցորեկը չէր կրնար արթննալ ետ կենալ:

Անգամ մը, սակայն, Հայր Թօփէս մահացու մեղք մը գործեց: Ինչպէս թէ ինչպէս, Ապրիլի սկիզբներն էր, որ մը, մինչ երիտասարդ փանակներ պատուհանն էր ու կը գիտէր կապոյտ երկինքը, ուր անպիկներ վարդի թերթերու պէս ցանուած էին, Հայր Շիրչիւ կանչեց զինքը ու հրամայեց նստիկալ որը դրամ հաւաքելու երթալ:

Ընդհանրապէս, տարուան այդ ատենները, Սարտինիացիք չատ

աղքատ կ'ըլլան, բայց նորէն բան մը կուտան վանականներուն, որովհետեւ խեղճ մարդիկը գիտեն թէ գթութիւնը այն ատեն աւելի արժէք կ'ունենայ երբ աւելի սուղ կը գնուի:

Հայր Թօփէս աւատուն կանուխ մեկնեցաւ. երկինքը արծաթի գոյն էր հագած, անտառը խոնաւ էր ու չոր տերեւները՝ որոնք հողը կը ծածկէին, ցօղաթուրմ էին: Մանուշակներու և նարկիսներու անուշ հոտ մը կը լեցնէր վանականը՝ որ կը ժպտէր:

Ա՛հ, որչափ երջանիկ կը զգար ինքզինքը ճամբորդելով: Շատ մը գեղեցիկ եկեղեցիներ պիտի այցելէր և պիտի տեսնէր Նուօօթի գերապատեալի եպիսկոպոսը, որ սուրբ տաաքեալի մը պէս գեղեցիկ ու պատկառաղդեցիկ էր:

Լերան ստորոտը երբ հասաւ, մութ և լռիկ դիւղը մտնելէ առաջ, վանականը պահ մը մեծ կաղնիի մը տակ հանգչեցաւ, որուն մօտ աղբիւր մը կը պղպշտէ: Հեռու չէր գիւղին առաջին տունը, և երկայնաձառակ գեղեցիկ սեւուլիի ալշիկ մը, կապոյտ աչքերով, տունէն դուրս ելաւ, աղբիւրէն ջուր առաւ, և շնորձալի ժպիտով մը բարեւեց վանականը: Վանականը դիտեց աղջիկը և բնաւ չի վրդովեցաւ ո՛չ անոր ներկայութենէն և ոչ ալ անոր ժպիտէն, նոյնիսկ հարցուց անոր թէ՛ որո՞ւ կրնար դիմել ձի մը առնելու համար: Աղջիկը ցուցուց իրեն վանականը գտաւ ձին, մեկնեցաւ, գիւղին շրջանը ըրաւ, այցելեց եկեղեցիները, Նուօօթ եկաւ և եպիսկոպոսը տեսաւ:

Օգը հրաշալի էր, անուշ և մեղմ: Արեւը արդէն տաք, բայց սպիտակ չոգիններէ քօղարկուած, հեշտալի մեղկութեամբ մը կ'ողողէր կանանց դալար դաշտերը, մարդարտածաղիկներով, ճերմակ փուշերով ու նարկիսներով լեցուն:

Երիտասարդ վանականը հաճոյքով կը ճամբորդէր, ամէն տեղ մանկական ուրախութեամբ մը բարեւելով ամէն անոնք՝ որոնց կը հանդիպէր: Երբեմն մեղմ բարձրաբերձ խոտերու մէջ կը մխրճուէր, մինչ իր ձին կը ճարակէր, և ինք կը զգար անհուն հեշտանք մը, նման այն յոսիչ տախտիսներուն, զորս կը զգար վանքին մէջ իր աղօթքներուն մէջէն ուրջայտ թիւնը տեսած ատեն:

Դիչեր մը, անծանօթ գիւղ մը հասաւ. տուն մը չէր ճանչնար հոն, ուր դիմէր ասպնջականութիւն խնդրելու. գիշերը պայծառ, մեղմ, անուշ ու բուրումնալից էր յունիսի դիչերի մը պէս: Հայր Թօփէս պիտի ուզէր բաց օդի մէջ պտուկիլ, եթէ իր մախաղները լեցուն չըլլային և եթէ գողերէն չի վախնար: Ո՞վ գիտէ, ժամանակները գէշ էին, աշխարհի մէջ լաւ մարդիկ ու գէշ բնազդ ունեցող մարդիկ ալ կային, և յետոյ այնքան յոգնած կը զգար ինքզինքը, որ կատարեալ հանգարտութեան մէջ քնանալու պէտքին կը կարօտէր:

Առաջին հանդիպած դուռը դարկաւ: Անմիջապէս բացին իրեն ու

գեղեցիկ ու բարձրահասակ կին մը երեւցաւ, թուիս կոպոյտ աչքերով, որ շատ կը նմանէր աղբիւրը հանդիպած աղջկան:

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուց մէկէն, զարմանքով վանականին նայելով: Ինչ ուզելը ըսաւ:

Երեսասարդ կ'ընր քիչ մը տառախեցաւ, իր սեւ ու թանձր թարթիչները խոփռելով. յետոյ վանականը ներս մտցուց իր ձիուն հետ, և տունին կից զգոյի բակ մը առաջնորդեց:

Մինակ լին մըն եւմ, ըսաւ, օգտելով որպէսզի վանականը ձին պարպէ, և խոգտով քիչ մը հեգնանքով, բայց կը յուսամ թէ ժողովորդը չգիտի չարախօսէ, եթէ ձեզ լո՞ւ տունս պառկեցնեմ:

Անշուշտ ոչ, պատասխատեց Հայր Թօփէս, ժպտելով, ամէն պարտաւոր մէջ արշալոյսին գիտի մեկնիմ: Ասկէ զատ հոս բակն ալ ես շատ լաւ կը քնանամ:

Աստուած չընէ, ո՛չ, ո՛չ. Աստուծոյ ծառայողը՝ իմ տունին մէջ լաւագոյն տեղը ունի միշտ. բայց ձեր մախաղները որքան ծանր են, շատ բան հաւաքեր էք:

Այո՛, ամէն թեմեր ինչի թարմ պանիր տուին, Աստուած օրհնէ հօտերսին. Բարեկրօտ տանտիրէններ ինծի ի՞նչ տուին, Աստուած զանոնք ալ օրհնէ:

— Ամէ՛ն, ըսաւ կ'ընր խոգտով:

Այս կ'ընր տարօրրնակ ձեւ մը ունէր, յորատեւ քրքիջ մը, որ իր աչքերը լը կայծ լլտացնէր:

Վանականը գեղեցիկ սենեակ մը առաջնորդեց. կարմիր ծաղիկներով, կապոյտ թուղթով ծածկուած սենեակ մը և անոր գլխի և ուրիշ ընդեղիններ իսկուց:

— Ոչ, ոչ, կ'ըսէր վանականը և չէր ուզեր ընդունիլ:

Բայց անդառնալով տեսաւ շնորհալիութեամբ մը կը պնդէր, այնքան հրապուրիչ ու վարդապետութեամբ, որ վանականը կարկանդակ մը կերաւ և շիւ մը գլխի խմեց, գլխի մը՝ անուշ, ուժով խողանալով տունկերու բոյրին պէտ՝ որոնք իր վառքը կը չրջադառնէին. յետոյ շիւ մըն ալ խմեց, յետոյ վանքին պատուանէն գլտած վերջալոյսին բոցանուտ երկինքին գոյնով կար իր բնական մըն ալ... յետոյ հառ մըն ալ...

— Էսէ՛ք ինծի, ո՞ր վանքէն էք, ուրիշ էք, հարցուց կ'ընր անոր քով ոտքի կեցած:

Անիկա ն գատակաւ որ կերպով մը հարցում էր, քօրսէ մը զրած էր որուն փոքրիկ մարդրանները և ուղեայ գործերը կը չողային լաւբարին լոյսէն. ի սեւ մագերի՝ երկու քի բաժնուած ճակովն վրայ և ակամջնակուն չարճը հիստում, անուշահոտ իր գերով կը փախկէին: Մանուշակի գլխովցնող բոյր մը կը ծորէր անոր խորհնէն՝ որ զգլխանքով կը խննթեցնէր վանականը, ըմբելներուն և գլխին հեշտանքէն աւելի:

Այն տեսակ անուշութիւն մը, այն տեսակ անհուն երանութիւն մը կը զգար վանականը, զոր մինչեւ այն ատեն երբեք չէր ճանչցած, աթոռին վրայ դաժուած էր, անկողինին մօտ և իրեն անանկ կուգար որ՝ իր բոլոր ջիւղերը բրթեր էին և մարմինը չէր կրնար չարժել. և ան կը հրճուէր այս ջղաթափութիւնէն ու իր բոլոր ֆիզիքական ուժերուն այս լքումէն: Յետոյ սկսաւ պատմել իր բոլոր պատմութիւնը:

— Ահ, ըսաւ զարմացումով, դուք այդ նշանաւոր աւագակին զաւակն էք, ուրեմն ինչո՞ւ վանական եղած էք:

— Հօրս մեղքերը քաւելու համար, պատառխանեց. և անմիջապէս աւելցուց թէ՝ այդ բանը ո՛չ մէկուն ըսած էր մինչեւ այդ օրը. բայց կինը իր հեգնող քրքիջներով կը միտարայնէր զինքը:

— Ինչո՞ւ կը խնդաք, կակազեց:

— Որովհետեւ անմիտ էք. ու կքելով անոր վրայ, սկսաւ շոյել տղայ էք, անմեղ տղայ մը տակաւին, անմեղ էք, այո՞... ո՛չ...

— Այո... ըսաւ տեգոյն ու դողդոջ և մեղմօրէն կինը անդին՝ հրեց:

Այդ պահուն դուռը զարկին, բայց կինը չիմանալու զարկաւ. նորէն եկաւ ծոցեալ վանականին վրայ, ձեռքերը բռնեց, իր վիզին անցուց ու համբուրեց այդ մոլորեալ հէք տղուն շրթունքները:

Կրօնաւորը աչքերը գոցեց և երկու արցունքի կաթիլներ սկսան սահիլ տեգոյն այտերուն վրայէն որոնք կը դողային:

— Դրկէ՛ զիս... ըսաւ խելացնոր, բայց մի՛ լար... մի՛ վախար... մե՛ղք չի կայ... մեղքը ի՞նչ է որ... զրկէ՛ զիս...

Ու գրկեց:

Ու այսպէս երկու գիշեր ու երկու ցօրեկ այդ տղետալի տունին մէջ մնաց վանականը: Յաճախ դուռին զարնուիլը կը լսէր և ամբողջ անդամներովը կը դողդղար. բայց այդ կինը կը խնդար ու կ'ապահովցնէր զինքը:

— Երբ չեմ բանար, կը հասկնան թէ քովս մէկը կայ ու կ'երթան...

* * *

Երրորդ գիշերը ճամբեց կրօնաւորը

— Դնա՛ ըսաւ, ուրիշ ատեն նորէն կուգաս. հիմա դնա՛ ալ:

Մախաղներուն մէջի բոլոր հաւաքածները հոն ձգեց վանականը: Աղջիկը սկիզբները նախ անոր նուէրը մերժած էր. բայց շատ գիւրու-թեամբ համոզուած էր ընդունիլ ետքէն:

Հետեւեալ իրիկունը վանք հասաւ:

Երբ Հայր Շիրչիւ տեսաւ զինքը, խաչակնքեց երեսը ու ըսաւ.

— Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ամէն. արդեօք բա՞ն մը պատահեցաւ քեզի, Հայր Զո՛ւան, հարիւր տարու ծերունի մը դարձեր ես, տեսնողը պիտի կարծէ թէ դժոխքէն դուրս կ'ուլկես կոր:

—Ահաւասիկ, ըսաւ խեղճ տղան մարած ձայնով մը, գողեր յարձակեցան վրաս, կողոպտեցին ու ծեծեցին զիս:

Հայր Շիրչիւ՝ կ'իսովին գինով, ծուռկի եկաւ, և սկսաւ գոռալ աշխարհի չարութիւններուն դէմ, յետոյ ոտքի ելաւ պատին կրթնելով ու հարցոց.

—Եւ ձիւն... ա՛ն ալ գողցան:

—Ո՛չ, ողջ առողջ տէրոջը յանձնեցի:

—Է՛հ, լաւ, ո՛վ թերեհաւատ մարդ, պէտք է նորէն սկսիս ճամբորդութեանդ: Եւ պէտք է ատ: Երբ գիտնան թէ՛ քեզմով Յիսունն է որ կողոպտուած է գողերէն, կրկինը պիտի տան այս անգամ:

Հայր Թօփէս, մեռելի մը պէս տժգունած, բողբոլին գունաթափեցաւ և սկսաւ գողգողալ:

—Հայր Շիրչիւ, ազաչեց ձեռքերը իրարու միացնելով, մի՛ զրկէք զիս նորէն. նորէն պիտի յարձակին վրաս: Կը վախնամ կոր. գթացէք ինծի. ուրիշ մը զրկեցէք իմ տեղս:

—Ուրիշ մը, չպիտի հաւատան անոր. պիտի բռնն թէ չահագործում է ըրածնիս. գնա՛, Հայր Թօփէս, երբ տեսնեն ծերացած դէմքդ և աչքերդ, սարսափով լեցուած, պիտի կրկնապատկեն իրենց լուսան:

Զուր տեղը վանախանը խնդրեց ու պաղատեցաւ: Հայր Շիրչիւ շատ լաւ գիտէր ետ կեցնել զայն միտքը դրածէն. և սակայն շարաթ մը հանգիստ չնորհեց: Մարտիրոսութեան շարաթ մը եղաւ ատ:

Լեռներուն հրաշալի գորունը լոյսով և բոյրերով կը պատէր խոնաւութենէ ու մամուռներէ կանանչած վանքը. անծեղները կը սուլէին զուարթօրէն, մանուշակներով լեցուն անտառներուն մէջ: Մառուղիները կը դողդղային ու գազլ գետիւռին շունչին տակ կը փախլէին: Հայր Թօփէս կը խելացնօրէր, երակներուն արիւնը անյաղթելի լիւսնքի մը մէջ հրատօյր, յիշատակներով, խզճի խայթերով ու ըզձանքներով լեցուած: Եւ կ'ուզէին որ հոն երթար...: Ո՛չ, աւելի պիտի նախընտրէր մեռնի՛լ. ճամբայ ելլելով անխուսափելիօրէն հո՛ն պիտի երթար, ա՛յդ ճեղք... և ինք, ո՛չ, նորէն այդ մահացու մեղքին մէջ չէր ուզեր իյնալ. հիմա ան պիտի ուզէր հարիւր տարի ապրիլ և հարիւր տարին ալ վանքին մէջ, ժայռի մը գագաթը քաւելու համար իր և հօրը մեղքը: Շարաթը լրանալուն սակայն, ինքզինքը քիչ մը հանգարտած դտաւ և մեկնեցաւ: Յոյսի ճառագայթ մը կ'առաջնորդէր զինքը: Թշուառներու Աստուածը պիտի պաշտպանէր զինքը...:

Այս անգամուն ալ նորէն, երկինքը անտառին խիտ ճիւղերուն վրայ արծաթէ քօղի մը պէս կը տարածուէր. ու մանուշակներու անուշ բոյրերը՝ որոնք այդ կնոջ բոյրը յիշեցնել կուտային իրեն, կը յուզէին Հայր Թօփէսը. և զգաց որ իր սիրտը տակաւ մահացու արտաթեամբ մը կը պատանքուէր ու սեղմո՛ւնելով կը պղտիկնար, ժանտափուշերու կոկոնի մը պէս:

Երբ լերան տոթորոտը հասաւ, կեցաւ, առջի անդամուան պէս, ցած ձիւղերով կաշնիրն տակ, աղբիւրին մօտիրը:

Գիւղը լուռ էր. թեթիւ օրէն երանգում արշալոյսին շողերէն:

Առջի անգամուան պէս՝ երկայնահասակ ու գեղեցիկ աղջիկը եկաւ իր կապոյտ աչքերով ու կար լիւր շրթունքներովը ու աղբիւրէն ջուր առաւ:

Պզտիկ վանականը տեսնելով՝ շնորհալիօրէն ժպտեցաւ անոր և փայտայիջ ձայնով մը լուռ տղու մը խօսելու պէս.

— Գողերը յարձակեցան վրադ. ա՛հ, չա՛ր գողերը, գժո՛խք պիտի երթան անոնք...:

Երիտասարդ վանականը չպահապանեց. բայց յիմարի մը պէս նայեցաւ անոր. ա՛հ, այո՛, ոտ՛որը Աստուած... միւսին կը նմանէր ան, և անոր նայելով՝ վանականը կը զգար այն տեսակ կիրքի արբուսանք մը՝ որ կը կուրցնէր զինքը. կօտուած էր, կօտուած, ա՛յ յախտենապէս: Զգաց որ՝ ալ քայլ մը չէր կրնար առնել գէպի այն ճեղք, և անարժ մնաց:

Երբ աղջիկը հեռացաւ, բորձրաբերձ ու գեղեցիկ, Սահարուհին պէս գլխուն վրայ կրելով իր կուժը, վանականը՝ որ չէր դադրած խանդա՛րորդ գիտելէ զայն, մէջքէն քակեց զորը կաշին՝ որ իրը գօտի կը ծառայէր ու ձիւղի մը կապեց. Քարի մը վրայ ելաւ, հանգույց մը շինեց կաշին ծալքը, վիզը անոր մէջը անցուց... և ինքզինքը պարտապէս մէջ ձգեց...:

GRAZIA DELEDDA

ՀՐԱՆՑ ՆԱԶԱՐԵԱՆ



Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՆՈՒԷՐՆԵՐԸ

Մասիսի ծանօթ պարզեւտոր բաժանորդագրութիւնը, — որ իր նորութիւնովը մեծ ընդու՛նեղութեան արժանացաւ, և որով խմբագրութիւնս փախարը ունեցաւ զրական գեղեցիկ հատորներով օժտելու իր բաժանորդներուն մօտենալու անը, բացառիկ զօնողութիւնով մը, — աւարտեցաւ յունվարի վերջը: Միշտ մեր բաժանորդները իրենց բաժանող դադրութեան հետ սիրուն նուէրներով օժտելու փախարով և չգրկելու համար նոր բաժանորդագրողները՝ մասնակցելու առիթն ենուէրներուն, հաստատած ենք ուրիշ նոր նուէրներու գրութիւն մը՝ որուն վրայ զապախոր պիտի տանք մօտաւոր թիւով մը, Փետրվար մէկէն մինչեւ մարտ 15: Մասիսի բաժանորդագրուող բոլոր բաժանորդները, ձրիաբար պիտի ստանան մեր նոր նուէրը, որ իր գեղեցկութեամբ հրապուրիչ համարմանքովը՝ կարող է զրաւելու համակրութիւնը ունենէն դժուարահաս ընթերցողին: Ամբողջ տարի մը Մասիս Գրական Նարածաթերթին հետ՝ տոնատարուն պարգեւի մը տիրանալուն առիթը՝ փոխան միմիայն 60 դրշ.՝ պատճառ մըն է՝ որ ընթերցողներ փութան իրենց կանխիկ բաժանորդագրութիւնով արձանագրուիլ Մասիսի, առանց սպասելու մեր պարգեւներու յայտնուելուն, ժամանակին նպատաւորութելու համար անդէ: Ամբողջ տարուան պայմանագրովը՝ լայն առիթ մըն է՝ ունենէն եկաւոր ճեղքու իսկ ընթերցողներու համար՝ կարեւոր հասցեներ և իրենց բաժանորդագրելը, որպէսզի չի կորսնցնեն նուէրներուն տիրանալու առիթը: Այդ պայմանագրովը ետքը հասնող բաժանորդագրութիւններ՝ անմասնակից կը մնան պարզեւտոր բաժանորդագրութեան վստահ ենք թէ Մասիսի բաժանորդագրութեան մէջ մտցուած բաժանորդներու համար մեծապէս շահուէտ այս առիթն ալ պիտի ողջունուի այն համակրութիւնով՝ որով ողջունուեցաւ զիրքերու պարգեւի մեր նախորդ պայմանը:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Գումը՝ որ արձագանգեց նախորդ ուրբաթ առտու, ջրատիչ ու եղբրական էր: Մահովը վսեմ. Գրիգոր Խան Շամտանճեանի, մեր մէջէն կ'անհետաւայ ղէմք մը՝ որուն կորուստը անդարմանելի է: Արձանագրելով իր մահը Մախիսի մէջ ամենախոր կսկիծով, չենք գտնուիր սովորական պարսպայի մը առջև ամուսնի պարտքի՝ մը որ իր զերին փութկոտ՝ անտարբեր կը թողու սիրտը, իր կորուստին ցաւը ու թողած ընդհանրական սուգը բաժնելով է որ կը գուժենք անհետացումը այս հազուադէպ ղէմքին, որ արժանաւորագոյն տեղեւէն մէկը ունի մեր համանքին մէջ, իբր հոգիի, սիրտի ու միտքի տէր մարդ, և զաղպարականի, սկզբունքի, կոչումի ծառայած կեանք մը, ինչպէս բարձր արժանիքներով անհատականութիւն մը, թեւտակած դիրքերու օգտակար՝ իր պաշտօնին ու ծառայութեաններուն մէջ. զմոտ՝ հանդէպ շուրջիններուն, առատաձեռն՝ ամէն ազնիւ կարօտութիւններու, ան կը թողու անուն մը, լիշատակ մը, որ չի՝ մոռցուիր միտքերու մէջ:

Ազդուած վերջին ցուրտերէն, հիւանդ էր ատենէ մը ի վեր, բայց մօտ օրերու մէջ, բաղդատար կտգուրուած, որով կարող կ'ըլլար իյնելու վաճառատուն: Մահուան նախորդ օրը, անհամբեր սոգսով ինքզինքը վաճառատունին մէջ, մեկնիր կը զգացնէ պաշտօնեաններուն, հակառակ իր սովորութեան ազգարարելով որ՝ ա՛յ չդառնար ձաւատագրային անողոր նախազգացում, որ իրա՛ւ պիտի վճէր իր ալ չդառնալը: Զինգշարթի իրիկուն, սովորութեանը համեմատ թեթեւ ճա՛յ մը կ'ընէ, և իր սիրտին ընտանեկան շրջանակին մէջ խօսակցութիւններով ու ընթերցումով քիչ մը ժամանակ անցընելէ ետքը, կէս գիշերը անցած սենեակը կ'առանձնանայ. սակայն պսակելէն քիչ ետքը շնչանկէտութեան սաստիկ տագնապ մը կ'ունենայ, իր քովը կը փութան Տիկին Շամտանճեան և զաւակները և թէպէտ բժշական անմիջական դարմաններ կը հասցունեն, սակայն մահը յանկարծական կ'ըլլայ, սիրտի մեծ երակին խզումով:

Շամտանճեան Խան մօտ 55 տարեկան էր

ծնած Լէնի-Դարու և գաւալը քիւրճի Աւետիս աղայի, որ իր տղոյը խնամուած կրթութիւն մը տալու փափաքը իրագործած էր, ամէնքն ալ բարձրագոյն վարժարաններու մէջ դաստիարակելէ ետքը, Գրիգորը Բարիգ զրկելով, առեւտրական բարձրագոյն վարժարանի մը հետեւելու համար, ուրիշ կը վկայուէր փայլուն վկայականով: 1872ին, եղբորը Միհրանի հետ կը ձեռնարկէր վաճառականութեան, ուր տարիներու ընթացքը զինքը կը տիրացնէր հսկայական յաջողութեան. ներկայիս ամէնէն Նշանաւոր վաճառականներէն մէկը հանդիսացնելով, իր ընդարձակ վարկով, պատուաւոր անունով և լայն հաճախով: Քսանըչուր տարի առաջ կ'ամուսնանայ Օր. Փանոսեանի հետ, աղջիկը Գէորգ էֆ Փանոսեանի և քոյրը Աղբըսանը էֆ Փանոսեանի, — և կ'ունենայ չորս մանչ գաւալ, ինչպէս առեւտրական ապարէզին, նոյնպէս մայրաքաղաքի ու մասնաւորաբար Բերայի բարձր դասակարգին մէջ նշանակելի ղէմք մըն էր Շամտանճեան Խան, և իր տիկնոջը հետ զարդ մը՝ ընկերութիւններու և երեկոյններու Պարսիկ գեսպանատունը գնահատելով Շամտանճեան Խանի ամէն կարողութիւնները՝ զայն կոչեց Թարգմանի և առեւտրական խորհրդականի պաշտօնին, ուր կարեւոր ծառայութիւններ ունեցած է:

Իր անձին արժանի՝ մեծապէս հանդիսաւոր շքեղութեամբ տեղի ունեցաւ յուղարկաւորութիւնը, ներկայութեամբ ամէն ազգէ անտօմոյ կերպով խուռն բազմութեան մը, ուր ներկայացուցիչներ կը համրէին ամէն հասարակութիւններ ու պաշտօնական մարմիններ: Ընդհանրական համակրութեան և անկեղծ վշտակցութեան միահամուռ ցոյց մը աւելի կատարելով չէր կրնար ըլլալ: Հազուադէպ կերպով մեռելական Թափոր մը ա՛յնչափ մեծ և ա՛յնչափ բնորոշած բազմութիւն մը խմրած է: Եկեղեցին զգեցած էր իր ամէնէն մեծամայելոյց հանդիսաւորութիւնը: Մահաբեմը՝ ուր կը հանդէր մահագնիէ գեղակերտ դազաղը, ծածկուած էր բազմաթիւ ծաղկեպսակներով, Արարողութեան նախագահեց Ս. Պատրիարքը, իր շուրջը ունենա-

լով Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս, Տ. Հմայեակ, Տ. Գեորգ, Տ. Արքիմանդիտ, Տ. Մովսէս և Տ. Գաբրիէլ ս. բազան երը, ինչպէս Տ. Տ. Բարգէն, Եղիշէ, Հանան, Ներսէս, Գրիգորիոս, Աբարթեան, Գորիւն, Ղեւոնդ. Եղնիկ, Տիրայր, Վրդանէս և Մարկոս վարդապետը, և քառասունի չափ քահանայներ, Մատթաւոս շարականները երգութեան սրտառու ղեկավարութեամբ և Ս. Պատրիարքը խօսեցաւ իր ամենէն յուզիչ դամբաստաններէն մէկը. —

«Խորհուրդք բարեաց զգուժացեցն զԲն, միտք սարք սյանեցեցն զԲն»

Ահա վաճառական մը, գործի մտք մը, որ կը հնաւանդ մտէ: Ինչո՞ւ հոմար ասոր մասին այստան կը յուզէ մեզ. ինչո՞ւ հոմար ամէն վաճառականն, ամէն գործի սարքու մանր այսչափ չի թարեցնէր մեզ: Սովորութիւն ունինք բռնելու քէ՞ մարդիկ դուռէն կը դատեն գիւր, մինչ Աստուած միայն գիտէ հնէն սրտերը: Բայց բոլորովին ճիշտ է առանկ մտածել. չէ՞ որ մարդկային ընկերութիւնն ալ կերպ մը ունի, միջոց մը ունի իր անդամներուն միտքին ու սիրտին մէջ բախտնելու, ազնիւրան ազնիւէն որոշելու, եւ խորը կարգադր զգացումներուն ու շարժանքներուն Հանրային կարծիքի առանկ անսցիւտ եղանակ մը ունի յանախ երեւան բերելու նշանակութեամբ: Եւ ընկերութիւնը բնագոյրաբար սուգ կը բռնէ երբ իր մէջ նշանաւորապէս ազնիւ սիրտ մըն է որ կը դադրի բարախելէ: Գրիգոր Խան Շամսանեան Ազգիկն հոմար հոյակապ շեքներ չկաւոյց եւ բարեբարի մեծագործ թիւղոսներ չտաւաւ: Բայց որովհետեւ լուսութիւնը սիրեց եւ համեստօրէն պարտկեց իր գործած բարութիւնները, հասարակութիւնը շանգիս սնար քէ ի՞նչ տեսակ բարի եւ առաքին ոգործ երիտասարդ մըն էր ան եւ հասարակութիւնը որ արդիւնաւոր գտակ Հայ եկեղեցիի, ինչպէս եւ անսցիւտ Պետական անձնատնտեսութիւն մը: Իրեն դիմող կարօտները, չհարմարեցող, համարային գործեան աշխարհի Հասարակութիւնները, գործի ասպարէզը քեպիտալիզմը սերունդը, յուսալից ճաղանցները, անպաշտ խոստացող երիտասարդները, ո՛չ մէկը, ո՛չ ոք, ձեռնդրեցայն դարձան, եւ

Հայոց Պատրիարքն ալ որ յանախ պէտք կ'ունենար կոչում ընելու իր բարեփոխութեան, միտք սիրտիւր պատասխան մը տալու: Ի կեղեցի կամ դպրոց չեղնեց, բայց իր բարեգործութեան համագումարը այդ տեսակ անի մը խոշոր շէնքերու արժէքին կը հաւասարէր: Գործի մարդու ազատագոյն տիպար հանդիսացաւ, այնքան պատասխանատու անարգ մամեային լուսազոյն կիրաւութիւնը ունենալով. Իրեւն Պետական պաշտօնատն, պատասխանատու ասպարէզ մը բոլորեց: Խճճաւի շունքեր, այնքան վաղականկար ու կենցաղագէտ էր: Զկայ գիտէր ճանչցող իր ազգային կամ օտար քաղաքակրթական մէջ որ իր զովեսքը չընէ: Եւ իր գործերը մօտէն գիտեցողներուն մէջ չկայ մէկը որ չուրայ իր կարուստը: Եւստասանեան Խանին ինչպէս կենանը, նոյնպէս մանր խրատներով լեցուն է մեզի հոմար: Իր վստահաւ կորուստին կոկիւր մեր սիրտին մէջ. իր օրինակը մեր աչքին առջեւ. գրգիռ մը պէտք է լլաւան մեզի երբեք չափազանցուած վստահութիւն չաճելու կենսիկ տեսակներուն վրայ: Բարի անուն մը ձգելու հոմար ինչ սարք միտք որ կը յղանան, պէտք չէ որ ճարտար ճարտի յետաձգեն, կարծելով որ միտք ծաւաւանաւ կ'ունենան իրագործելու: Համեմատաւոր կանոն մտաւ բարեփոխական հանգուցեալը, բայց արդէն գեղեցիկ յիշատակ մը կը բողոք մեր մէջ, որուն կրնան նախանձիլ շատ աւելի երկարակեցանք: Եւ որ պատեն առիթներու կը սպասեն: Իրաւ է որ Մովսէսէն ի վեր երկարակեցողութիւնը երկնային շնորհ մը կը նկատուի, որովհետեւ «Բարի գործէ որ երկար ապրիս» բուռն է, բայց երիտասարդին հոմար կեանքի երկարութիւնը միայն առաջնորդային կեանքով չէ որ կը չափուի: Ի՞նչ արդարեւ ունինք որ գերեզմանէն անդին ալ յիշուինք: Կրնո՞ւն. յուսալ որ մեր մահէն ետքն ալ զովեստով յիշուի մեր անունը՝ եւ օրհնուի մեր յիշատակը: Ահա նշանակութեամբ երկարակեցողութիւնը որ կրնայ փոխարինել մարմնաւոր կեանքի վաղանցուկ կարճութիւնը եւ չնչին տակաւնութիւնը: Եւ գէթ այս երիտասարդական մշաւտով կը միախառնուինք, վստահ ըլլալով

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Օւմ. Թատերաբեմի կորնցուց իս կ'սբեւոր անդամներէն մէկը, մահովոր հանրածանօծ կատակերգակ Չափրատոի Վերսիյու տաղնա պալի. Թշուառութեան մը մատնուած էր Չափրատ, ինչ որ հակադրեց զինքը հանրային զԹումեան դիմում բնելու. հրապարակաբար չբաւեցին տեսական վերակենդաութիւն մ. շնորհելու իրեն և բնկնուած տարիքի բեռէն ինչպէս անհանդարձեալ չբաւարածեան մը արհաւիրքներն, յաղթուեցաւ Մաշէն. իր զագագը շրջապատուած համակիրն բոլոր խումբէ մը, մարմինը ամբողջութեամբ Սկիւտարի ազգ գերեզմանատունը:

★ Նշանակելի իրողութիւն մըն է. անոր տեղի ունեցաւ կիրակի օր Պէշիքմաշի եկեղեցիին մէջ իսկ օմ խմբագիր Աւետիս էֆ. Կէզըրեան՝ բաճանայ ձեռնորոշեցաւ. լրագրական բազմամեայ կեանք մը կրօնական սքեմի հանգրուանին յանգեցնելով:

★ Հաճոյքով կ'արձանագրենք թէ՛ Գրիգոր Խանի՝ պարսկական դեպրանտունի մէջ ունեցած դիրքը կը յատկութեամբ՝ իր անդրանիկ որդիին Հրանտ Խան Դամոնեանի օժանդակ թարգման կարգուելով, որուն շնորհուած է նաև Խանութեան մամուլը տիրողոս:

«ՓՈՒՆԱՆ. ԴԵՄ.Ղ.ԵՆՊՍԱՆԻ»

Ողբացեալ Գրիգոր Խան Դամոնեանի յիշատակին սիրելի մեծատանը մտքաւ բլլալու բազմանքով՝ Խմբագրութիւնս երեք օրինակ տարեկան Մասիս կը նուիրէ զատուական երեք վարժարաններու. իր մասին համեմատ քաջանով մը յատկացուցած բլլալու համար օգտակարութեան ազնիւ ոգին ալն թանկագին անձնաւորութեան, որ երբեք չխնայեց իր նուէրը. երեք օրինակ ալ Պատիւները կը դրկենք Սեփագի ազգ. վարժարանին, Վանի նրամեան վարժարանին և Խորբերդի Թէլիսփինցիին վարժարանին:

★ Արամ Անտոնեան՝ որ տկար էր բունի օրէի վեր, շատ ուշ միայն կրցաւ հասկնալ ողորացեալ Գրիգոր Խան Դամոնեանի

նուիրութեան յոգնած մը՝ զոր պիտի հրատարակէր յաջորդ Թիւով. Արամ Անտոնեան երկար տան աշխատած ըլլալով Գրիգոր Խանի ճոխ մատենադարանին դասաւորութեամբ, առիթը ունեցած է ժողովն ճանչնալու Դամոնեանի Խանը, ինչ որ աւելի շահեկան կը դարձնէ իր յոգնածը. Իսկ իր Յիւսէսիկները Արամ Անտոնեան պիտի աւարտէ Մասիսի աղբ Թիւերով:

ՎԱՍ. ՔԷՄ. ՊԷՅ. Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ՛ Վեհ Սուլթանը գնահատելով Տպագրական Տեսուչ Վեհ. Քէմալ Պէշի բարեր և հաւատարմական ծառայութիւնները բարեհաճած է Ն. Վեհութեան շնորհել Սէնիտիկի ակադեմիա բարձր պատուանշանը. Սե. սրտագին ինքնակցութիւնը կը մատուցենք Վեհ. Քէմալ Պէշի Կաշա. այս բարձր գնահատութեան առիթով:

«ՄԱՍԻՍԻ ՆՈՐ ՆՈՒԷՐՆԵՐԸ»

Հազիւ նախորդ իւով հրատարակուած Մասիսի նոր պարզեւաւոր քաժանագրագրութեան յայտարարութիւնը՝ ամէն կողմէ կը հարցնեն մեզի՝ մեր նոր նուէրներուն ինչ բլլալը: Իսկ ինչ մը առնելի համար՝ պիտի վերապահենք անոր յայտարարութիւնը մեր տեսակետաւոր հաւատարմութեամբ: Անցնենք միայն թէ այդ նուէր պիտի բլլայ ա՛յն տեսակ հրատարակչականութեամբ մը զոր ո՛չ մէկը պիտի կրնայ սովորական հռչակել: Պատճառ մը ունենալով որ ընթերցողներ վարձան ծամամալ և արժանագրութիւն Մասիսի իրենց քաժանագրութեամբ անմասն չմնալու համար այդ քաժանութիւն առիթով: Ըսենք նաև այս առիթով որ մասաւոր բիւի մը մեզ ընթերցողներ պիտի գտնեն գրական մեքում մը՝ շահեկան նիւթի մը շուրջ և ա՛յնչափ հրատարակչութեամբ:

★ Հաճոյքով կ'արձանագրենք նշանաւորութիւնը «Բերկրութեան» քաժանագրական Բերկրութեան ընդհանուր պատուակալ շրջուն գրական շրջան էֆ. Թաշաճեանի. Սր. Ալանոյշ վարդապետին տեղ Մարի-Քէօյ. Փափագանց բնակարանին մէջ, ներկայութեամբ ազգականներու և բարեկամներու:

Հիմադիր. Կ. Ս. ԻԻԹԻԻԾՆԱՆ: Արտատպ. 80ԻԹ. Ե. ՄԱՍԻՍ: Գրագր. ՍԱԳԱՆԱՆ

որ Բարիդի ամբողջ աշխարհիկ և արուեստագետ դասակարգերուն ժամադրաւայրը կ'ըլլայ: Այս մրցանակին վերջին հանդէսին մէջ ուր Տիկին Սառա Պէրնսոն երեք արտասանութիւններ կատարեց, Օրերայի զմայելի երգչուհի Օր. Ալիս Վէրլէ և Օրերա Քօմիքի հոշակաւոր թէնօր Մ. Տէվրիէս երգեցին և Օր. Զամպէլլի ՆՅրդ դարու պարեր պարեց, Տիրան պէյ Ալեքսանեան իր թաջութակով նուագեր է՝ Քոնսէրվատուռի Տնօրէն Մ. Անտրէ Կէյհանի մէկ քանի կտորները, որոնք խիտ գնահատուելի և ծափերու արժանացեր են:

Բշ. Ս. Պատրիարքին անուան տօնախմբութիւնը ըլլաւ՝ Ն. Սրբազնութիւնը ընդունեց չնորհաւորութիւնը րազմաթիւ այցելուներու:

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ. — Տիար Յակոբ Թէրզեան՝ նշանուած Օր Մարիամ Քրքիւսեանի հետ (Հաճրն): — Տիար Միսաք Նազարեքեան՝ նշանուած Օր Գոհարիկ Պազպազեանի հետ (Ատաբազար):

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Տիար Բենիամին Թէլլիեան՝ առանձնացած Օր. Վարդուհի Զաքարեանի հետ Տիար Պետրոս Կնիպպահեան՝ ամուսնացած Օր Էմմէի Վիքորիա Գազազեանի հետ: — Տիար Միհրան Թարիկեան՝ ամուսնացած Օր. Վարդանոյշ Գարսաղփեանի հետ: — Տիար Յակոբիկ Թէօդօրեան՝ առանձնացած Օր. Աղաւնի Պաղսասարեանի հետ:

ՄԱՀԵՐ. — Գեորգ Կֆ Քէլեկեան, հին թանկանգին իրերու վաճառական. յուզարկ. Գատը-Քէօյի եկեղեցի. թաղում տեղին ազգ. գերեզմանատունը: Եակոբ աղա Ճրկանան (Պարտիզակ): Տիկին Սիրանոյշ Մ. Տէր Սահակեան (Պարտիզակ) եղբորդոստը ծանօթ ուսուցիչ Մինաս էֆ. Ծալեանի, որուն կը յայտնենք մեր ցաւակցութիւնը. — Պողոս Կֆ. Արմէրեան: — «Ճեման պապ» Հայր Գոսիայի Ճէնանեան վարժարանի հիմնադիր Եարութիւն էֆ. Ճէնանեանի:

ԱՐԵՐԵԼՔ

Օրաթերթ ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դր., գաւառներու համար 108 դր. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանոօ փողոց: ԱՐԵՐԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԲՈՒՆԶՆԵՐԵՐԶԵՄԻ, ԲՊՂԶՈՎԱԳՐԵԿԱՆՆ ԸՆԿ

Վերապահոյ մարտկան.

դրամագլուխ և պահեստ » 142,740,00

ՊԱՆԹԱՆ Ընկերությունը կ'ապահովագրե հրդեհի գեմ ամեն տեսակ կահ կորասի հանդէ, Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զերբամատչելի պայմաններով . իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է . կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն. ։

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՌԻՆՃԵԱՆ
Ղալաթիա ՏԵՍԻԷՆՍՊԻԷՆԴ Պատրիկից, Սևաստան Խան, (2)

Հանգուցեալ Կարապետ Լ.Ֆ. Իւթիւնեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին ըստ իւր գրաւաճառներու քով՝ Կեդրոնատեղի Այճեան գրատունը :

Ընտանեկան Գաղտնիքներ Յ հատոր 15 դր:

Արուարծանին Տղան Յ հատոր 15 գրք.

Հանրակառքին Ոճիրը 5 րդ:

Ամուսնութիւնք Բարիգուս 5 772.

Քաղաքական Տնտեսություն. Ժողով Կառնիէ 5 դր.

ԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Գրասէր բարեկամս ,

Լեզուագիտության փափաքս՝ ծանոթ է քեզ։ Այդ բաղձանքին յա-
դուրդ տալու համար շատ փորձերու ձեռնարկեցի, շատ գիրքերու դիմե-
ցի, շատ ուսուցիչներու օգնությունը ապաւինեցայ, առանց գոհացուցիչ
արդիւնքներ ձեռք բերելու։ Լսելով վերջերս հրատարակուած Զորինգե-
ռեան խօսակցութիւնը, հեղինակութիւն Զ. Էֆ. Փափազեանի, զնեցի,
հետեւեցող անոր Ոլթափն, առաջնատիրեցի, և այսօր կրնամ հաճաքով
տեղեկացնել որ՝ փափաքածիս չափ օգտուեցայ անդէ, ահպելս որ այսօր
կրնամ սահուն կերպով խօսիլ գերմաներէն, անգլերէն և ֆրանսերէն։
Խնժ ուրիշ բան չմնար ընել, բայց եթէ չերժապէս յանձնարարել զայն
քեզ և քուօր լեզուներ սորվելու փափաքողներուն։

ՅԱԿՈԲ Զ. ԱՇՃԵԱՆ

Եգիպտոսի Մանիսի գործակալն է Ազն. Տիար Մկրտիչ Եաճաճեան, որուն կրնան գիմել մեր բաժանորդները, վճարելու համար իրենց բաժանորդագիրը :

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ՏՕՒԹ. Ե. ՄԱՍԻՍ Ամէն տեսակ ներքին հիւան-
դութիւններէ զատ, մասնագի-
ւորաբար և երկար տարիներէ ի վեր
կը դարմանէ ստամոքսի, աղիք-
ներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջրային ականքները,
ներու, հին և նոր գաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց
ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ մի-
ջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս. օրէ վերջը: Զորեքշարժի
օրերը միայն ձրի: (8—10)



Անկարեւի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և ապշադրանքի աղբիւր մըն է:

Բողոք աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՄ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
սիանգամայն մեհեմաներ
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան
ամէնէն աւելի կատարելագործուածը,
հաստատունը և դիրքագործածելին ըլ-
լալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն
ոք Սինկերի մեքենաները կը գնեն:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախսուին մի միայն Սինկեր Լնկերութեան յաճաաաառններուն մէջ՝

ՇԱԲԱԹԱԿԱՆ
ԻԱՍՆԱԿՆՈՒՄՆԵՐ

കുടുംബം

1. Մեծ փողոց, Պօն Մանչէի դէմ, 343 և 343.

REFU.

2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ,

CHURCH

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը .

ԱԿՒՏԱՐ

2. Գարաշէօյ, Թրամիլէյին կայարանին դէմ.

1. Սուլթանն Համամ.

2. Սուլթան Դէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.

Զարչր Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնները ճշիւ.

Կատարեալ Երաշխաւորութիւն:

Մասնագիտեր գաւառներու, բոլոր բաղնիքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուէի Բերա, Մեծ Փաշոյ, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

(9-10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսի և գաւառներու համար տարեկան

6 դր.

Արտասահմանի

14 ֆրանք.

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին անոնապու մեր պարգեւները, միշտ ձրիաբար, Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Զհրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎ Ք ԱՐՄԵՆ

در علیہ غلطہ قورسئولی فائزہ نومرو ۷ «ماسیس» غزتیسی اداره فائزہ

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Գուրեւնլու խան, քիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue «MASSIS»,

Nº. 7, Courchounlou Han, Galata, CONSTANTINOPLE



Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՆՈՒԷՐՆԵՐԸ

Մասիսի ծանօթ պարզեւտոր բաժանորդագրութիւնը, — որ իր նորութիւնովը մեծ ընդունելութեան արժանացաւ, և որով Խմբագրութիւնս փափաքը ունեցաւ զրոյկան զեղեցիկ հետադիմութիւնով օժտելու իր բաժանորդներուն մատենագարանը, բացառիկ զոհողութիւնով մը, — տարտեցաւ յունկարի վերջը: Միշտ մեր բաժանորդները իրենց բաժանորդագրութեան հետ սիրուն նուէրներով օժտելու փափաքով և չլրկելու համար նոր բաժանորդագրութիւնները՝ մասնակցելու առիթն ունէրներուն, հաստատած ենք ուրիշ նոր նուէրներու գրութիւն մը՝ որուն վրայ զաղափար պիտի տանք մատուոր թիւով մը: Փետրվար մէկէն մինչեւ մարտ 15, Մասիսի բաժանորդագրութեան բոլոր բաժանորդներ, ձրիաբար պիտի ստանան մեր նոր նուէրը, որ իր գերազանցապէս հրապուրիչ հանգանքովը՝ կարող է զրաւելու համակրութիւնը ամէնէն դժուարահաճ ընթերցողին: Ամբողջ տարի մը Մասիս Իրական Շաբաթամբերին հետ՝ ամենասիրուն պարգեւի մը տիրանալուն առիթը՝ փոխան միմիայն 60 դր.ի՝ պատճառ մըն է որ ընթերցողներ վաւերան իրենց կանխիկ բաժանորդագրութիւնով արձանագրուիլ Մասիսի, առանց սպասելու մեր պարգեւներու յայտնուիլին, ժամանակին նպատատարութեւնը համար անկէ: Ամիսուկէսուան պայմանաւածը՝ յայն առիթ մըն է ամէնէն հեռաւոր տեղերու իսկ ընթերցողներուն համար՝ կարեւորագոյն հասցնելու իրենց բաժանորդագիրը, որպէսզի չի կորսնցնեն նուէրներուն տիրանալու առիթը: Այդ պայմանաւածմէն ետը հասնող բաժանորդագրութիւններ՝ անմասնակից կը մնան պարզեւտոր բաժանորդագրութեան վստահ ենք թէ Մասիսի բաժանորդագրութեան մէջ մտցուած բաժանորդներու համար մեծապէս շահաւէտ այս առիթն ալ պիտի ողջունուի ոչն համակրութիւնով որով ողջունուեցաւ զիրքերու պարգեւի մեր նախապէս պայմանը: